XXII

ՆՈՐ-ԴԱՐ

XXII

№ 38 Ուրբաթ, 2 Նոյեմբերի

1882 | 1905

Ուրբաթ, 2 Նոյեմբերի № 38

Բաժանորդագինը պատի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., երեք ամիսը՝ 3 ր. 50 կ., ամիսը (Թիֆլիսում) 1 ր., հատով՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ մոտիայն խմբագրատանը։
Հրատարակչական գրասենեակի՝ Դերբոհոդովսկայա փողոց, տուն № 14.

Հրատարակչութեան հասցէն՝ Типасъ. Редакція „Норъ-Даръ“
или Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Հրատարակիչը մայ է ամեն օր (բացի ուշ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաժին 2 կ., սակայն համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին հրատ. վճարը՝ կրկնապատիկ է։

ՆՈՐ-ԴԱՐ“-Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

Թիֆլիս վարչութիւնը որոշել է «Նոր-Դար»-ի տոմս տարուայ վերջին (հոկտ., նոյեմբ. և դեկտեմբ.) ամիսների համարները

Զրի ուղարկել նրանց, որոնք ցանկանում են «Նոր-Դար»-ին բաժանորդ պրուել առաջիկայ 1906 թուականին հետեւեալ պայմաններով.

1) Այժմէն 1906 թ. համար բաժանորդագրուողը վճարում է 10 րուբլի բաժանորդագինը և այս տարուայ համարների էքսպեդիցիայի համար 50 կոպէկ և առնում է բաժանորդ պրուելուց յետոյ այս վերջին երեք ամսուայ (թիֆլիսում) լոյս տեսնող համարները Զրի։

2) Նրանք, որոնք չեն կարող միանուագ վճարել տարեկան բաժանորդագինը, կարող են բաժանորդ պրուելով ուղարկել 5 րուբլի և 50 կոպ., իսկ դեկտ. վերջումը մնացորդ 5 րուբլին և կը ստանան այս վերջին երեք ամսուայ լրնթացքում լոյս տեսնող համարները Զրի և առաջիկայ 1906 թուականի համարները մինչև տարուայ վերջը։

Հասցէն՝ Тифлисъ, редакція „Норъ-Даръ“.

Խնդրում ենք նրանցից, որոնք վճարելիք ունեն, շուտափոյթ հատցնելու խմբագրութեանս. Тифлисъ, ред. газеты “Норъ-Даръ„.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂ.— Ի՞նչպէս պէտք է վերջ տալ դրութեանը։
Հայոց Չարդը։
Բազուի վերջին դէպքերից։
ՄԱՄՈՒԼԻ ՇՈՒՐՋԸ։
ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Դաւաս։ Ռուսիա։ Արտասահման։
Հայ դաշնակցականների Բուսլիկը։
Մուսուլման սոցիալ-դեմոկրատների կոչը։
Բեմական գործիչների կոչը։
Մեզ գրում են.—Եկատերինոդարից։ Դերբենդից։ Նոր-Նախիջևանից։
Լեզուն մի պահէք։
ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ.—Բազու։ Նոր-Բայազիտ։ Նամակներ Պարսկաստանից՝ Մարագա և Թեհրան։
Նամակ խմբագրութեան։
ՀԵՌԱԳՐՆԵՐ։
ՏԵՂԵԿԱՏՈՒ։
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 1 Նոյեմբերի 1905 թ.

ԻՆՉՈՒՆ ՊԻՏԻ Լ ՎԵՐՋ ՏԱԼ ԴՐՈՒԹԵԱՆԸ

Բ

Ձիշտ տասն ամիս է, որ կովկասեան հայ ժողովրդի դէմ յարուցուած հալածանքն անարգել շարունակւում է գանազան ձեւերի ու պատրուակների տակ։

Այդ հալածանքները մեզանից խլեցին մեր շատ սիրելիների կեանքը, հրդեհների և թալանի ենթարկեցին մեր շատ քաղաքների և հե՛ղ գիւղերի հայ հասարակութիւնների արիւն քրտինքով ստեղծած գոյքն ու ստացուածքը և, վերջապէս, ամբողջ մի ժողովուրդ դրին թափառական անդաստանի վիճակի մէջ, հարկադրելով նրան թողնել տուն-տեղ, անդ ու անդաստան և իր կեանքը փրկելու նպատակով հեռանալ Ռուսիայի նեղքերը։

Դրութիւնը, յիրաւի, ծայրայեղօրէն յուսահատական է։ Հայ ժողովուրդը համարեա ամէն տեղ, նուազ բացառութեամբ, ապրում է՝ բառի ամենաբոլորաձիգ նշանակութեամբ՝ անաբեկուած վիճակի մէջ. ամենատքքրիվ աննըպաստ տարաձայնութիւն նրան տարաբախտաբար է անում և դնում մահացուցիչ յուսահատութեան մէջ։

Ապրել ամէն րոպէ ահ ու դողի մէջ, չունենալ վաղուց իսկ ոչ մի ձեռնտու և ապրուստի վերջին միջոցներից զրկուած չլինելու ապահովութիւն—դրան չի կարելի կեանք անունը տալ։ Աշխատում կեանք ասելով երբէք այդ չէ հասկացւում։ Դա կեանք չէ, այլ տառապանքով լի անարժէք մի գոյութիւն, թոյնով լի բաժակ, որ ամեն րոպէ դառնացնում ու թունաւորում է մի ամբողջ ժողովրդի կազմը։

Հասկանալով, զգալով հանգրեթ մեր բերնի դէմ դրուած այդ թունդից բաժակի ամբողջ դառնութիւնը, հայ ժողովրդի բոլոր դասակարգերը, առանց բացառութեան, իրենց կաշուի վրայ կրելով իրենց պլսին կախուած այդ սուրի անընդհատ մահաբեր հատածները, մինչև այսօր էլ չեն կարողացել ոչ մի գործնական միջոց, ոչ մի ծրագիր մշակել այդ անվերջ շարունակուող կոշմարից ազատուելու համար։

Բազուի փետրուարեան ու օգոստոսեան կոտորածներից անմիջապէս յետոյ երեան եկան երկու ժողովուրդները հաշտեցնելու ձգտումներ, որոնք կեղծ ու պատիր համբոյրներից աւելի հեռու չգնացին և չունեցան բացարձակապէս գործնական ոչ մի հետեւանք։

Երեան անձնապաշտպանութեան ու ժողովուրդը զինելու առաջարկները ու ձգտումներ։ Սակայն այդ ևս չկարողացաւ հայ ժողովրդի մարմնի վրայ բացուած վէրքն արմատականապէս բուժելու սպեղանին դառնալ այն մի շարք անցեալող պայմանների պատճառով, որոնց հայ ժողովուրդը ենթակայ է Կովկասում։

Եթէ թուրք ժողովուրդը գործելիս լինէր բացարձակապէս ինքնագլուխ, և նրա որոմտութեան ասկ զրուած չլինէին կողմնակի օտար այժեր, ինքնապաշտպանութիւնը կարող էր մոլեռանդ թուրք ամբոխի սրուած մտքերժամկիներին չափ ու սահման դնել։ Բայց ամեն օր, հայաբնակ այս կամ այն կէտերում մէկը միւսին յաջորդող մեռը անցքերն անդադարի կերպով ապացուցին, որ հայը պարտաւորուած է իր գոյութիւնը պահպանելու համար կռուել երկու ճակատի դէմ, և թէ հրապարակի վրայ հետզհետէ թուրք ինքնամոռ եռանդը թոյնանում է շատ աւելի օրէնաւոր մի ուրիշ թշնամի...

Հարկաւորութիւն չկայ շատ հետեւանքը գնալու։ Ասացէք, խնդրում ենք, ինչ կարող էր անել ինքնապաշտպանութիւնը Բազուի ամենամերձին վէպքերի ժամանակ և ինչ կարողացաւ անել...

Չկայ ոչ մի հրաշքաւորութիւն, որ հալածանքի այդ վերջին ձևը, կատարածի ու կողոպուտների այդ եղանակը չի կըրկնուել վաղը կամ միւս օրը Գանձակ, Երևան և այլն։

Կովկասեան ոստիկանութիւնը դեռ ևս իր ներկայ կազմով շարունակելուց յետոյ, ինքնապաշտպանութիւնը խիստ տկար մէջից է հանդիսանում հայ ժողովրդին խեղդող կատաղի հոսանքի առաջն առնելու խնդրում։

Մեզ այս հանգման բերողն այն բազմաթիւ փաստերն են, որոնք կրկնուել են անընդհատ վերջին տասն ամսուայ ընթացքում։

Հայութեան այս մեծ ոդևոր առաջն առնելու, նրա զինուի կանխած այդ սուրը հետացնելու ամենազօրեղ միջոցը, կարուկ, համարեա միակ ճանապարհը մենք համոզուած ենք խնդրին օրինական հողի վրայ դնելու չանքերը։

Մեր այս ընդհանուր խօսքերով կամենում ենք ասել նախ այն, որ անհրաժեշտ է կովկասեան գէթ երեք ազգերի (հայ, վրացի և ռուս) ներկայացուցիչների ժողով կազմել, որին մասնակցին և բնակչութեան առաջ ներկայացուցիչները և որը պարզէ չափն և սրբնդրելի միջոցները ներկայ տառապանքները և համաձայնութիւն կայացնէ պրանց առաջն առնելու միջոցների մասին։ Երկրորդ՝ անհրաժեշտ է անմիջապէս կազմել Ռուսիայի հայերի ընդհանուր ժողով՝ մասնակցութեամբ հոգևորականութեան և ժողովրդի ներկայացուցիչների և դնել նրա վրայ պարտք խոր կերպով ուսումնասիրելու հայ-թրքական ընդհարումների պատճառներն ու ընթացքը և իւր զեկուցումը հրապարակի վրայ դնելու հարկաւոր առաջարկութիւններն և պահանջներն անելով։

Այդպիսի մի ժողովի գումարումը մենք համարում ենք բացարձակապէս անհրաժեշտ, և կարող է գլուխ գալ միայն հայ հոգևոր ծայրագոյն իշխանութեան ղեկավարութեամբ։

Կովկասեան հայի գոյութեան վտանգուած այս րոպէներում հայ հոգևոր ծայրագոյն իշխանութեան պահած լռութիւնը, նրա ցոյց տուած բացարձակ անգործունէութիւնը մեզ միանգամայն ապշեցնում է։

Դարերով հայ ժողովրդով ապրած հոգևորականութիւնն այսօր ամենայն սառնասրտութեամբ հանդիսատես է լինում իւր հօտի քաշած տառապանքներին, նրա անկումանը... և միևնոյնութեան, պաշտպանութեան համարեա ոչ մի չանք չի տեսնում նրա կողմից։

Եթէ հայ ծայրագոյն իշխանութիւնը չի կամենում տեսնել Կովկասի հայ տարրի բացարձակ ոչնչացումը, պարտաւոր է առանց մի օր իսկ անցնելու տմեն չանք գործ դնել մեր վերև առաջարկած ընդհանուր ժողովը կազմակերպել, որը միայն պէտք է կարողանայ օրինական ճանապարհով եթէ ոչ վերջացնել, գոնէ մեղմացնել հայ-թրքական ընդհարումների հետևանքները։

ՀԱՑՈՑ ՉԱՐԴԸ

—

ԲԱԳՈՒԻՑ մեզ գրում են.— Թուրքերն այսօր երկու կատակութեան են բաժանուել. մէկն սկսել է քարոզել, որ պէտք է վերջ տալ հայոց Չարդին և հաշտ ապրել նրանց հետ, միւսը շարունակում է առաջ գնալ նախկին թշնամական ուղղութեամբ. այս վերջին հատակագծութեան պատգամն է Աշուրովը, որի խումբը պատճառ եղաւ Սպարտիենի ասո ամրակածմանն։ Թուրք բանիմաց դասը շատ վրդովուած է Աշուրովի դէմ, որ աշխատում է խաժանի հետ անվերջ կռուարձներ յարուցանել հայերի մէջ։ Բանն այն է, որ հայերին վտանելով թուրքը ոչ թէ միայն չի շահում, այլ ինքն ևս մեծապէս տուժում է։

—

ԴԱՆԶԱԿԻՑ մեզ գրում են.— Սարսու գիւղացի մի թուրք ձի հեծած եկել էր հոկտ. 27-ին Գանձակ և փողոցներն լցնած՝ գոռում-գոչում էր, թէ հայերը կոտորել և կողոպտել են ամբողջ գիւղը։ Թուրքերն այդ բանից ըստ կանչին գրգռուել, հայերը խանութները փակեցեն և քաշուեցին իրենց տները։ Թուրք խռլաման գասակարգը մարդիկ ուղարկեց Սարսու գիւղը և տեսաւ, որ առա է յիշեալ մոնետիկի ձգած հաւարը. նրան ծեծեցին, և այժմ նա բանտարկուած է։

—

ԹԱՐԹԱՌ կայարանից մեզ կը գրում են.—Հոկտ. 10-ին այստեղ եկաւ գեն. Տակայշվիլին, հաւաքեց հայ և թուրք ներկայացուցիչներին, յորդորեց խաղաղ ապրել և Աբփառոսի, Հօյամմառաւի գիւղացիք ու կալուածատէր Ագի-գեօզալ-բէկի Ագի-գեօզալովին նշանակեց խաղաղարար յանձնաժողովի լիազօր անդամ, որ թուրք գիւղացիներին հանգստացնի։

Եւ Ագի-գեօզալ-բէկն սկսեց հանգստացնել. թուրք գիւղացիներից նա կազմել է չանգեզարների խմբեր, որոնք յայտնի ատաղձ թուրք բէկերի առաջնորդութեամբ ընկել են հայ գիւղերը, չեն թողնում վարուցան անել, խլում են լծած առւարները, ձեծում, կողոպտում են գիւղացիներին։ Այս բռնութիւնների դէմ գանգատներ գնացին հայ գիւղերից գեն. Տակայշվիլուն, իսկ գեներալը հրամայեց գաւառապետին էկզեկուցիա նշանակել նոյն հայ գիւղերում։ Ի լրումն այս բանի գաւառապետի օգնականը մի թուրք պրիստաւի հետ շրջեց այդ գիւղերը և մի լաւ ջարդ տուեց բողոքող գիւղացիներին։ Դովշանլուի քահանայ Տէր-Եսայի Շահիջանեանցին ծեծելուց յետոյ, կապել են ձիու պոչից և այդպէս 70 վերստ քարշ տուել բերին Թարթառ։ Ձերբակալուած է 70 հայ։ Կազակներն ու թուրք սարաժնիկները կոտորել են արել հայ գիւղացիներին Թանկալին կապերանների և իրենց ձիերի համար գարու ու դարմանի տոպրակներ են կրել։ Ամեն տեղ հայ գիւղերում կսկիծ է տիրում, վշտացրել են գարին ու խոտերը։ Լալագող հայ գիւղը հիմնայատակ են սրել։ Կատապուլց և այլ տեղերից 500-ից աւելի տաւար են տարել թուրքերը։ Մի գիւղի 400 խոզ կոտրել են, քանի որ իրենք խոզի միս չեն ուտում։ Բարապլուա, Բազալա, Ինածախ գիւղերից (Շուշու գաւառ) հայ գիւղացիները էլ են եկել Զլսանշիլի գաւառը ցորեն տանելու։ Կազակներն և թուրք սարաժնիկները խլում են նրանց վոլը, հազուստն ու ձիերը և լաւ ջարդ տալուց յետոյ քշում են Հասան-Ղալա։ Վանք և Առաջնաձոր գիւղերի հայերը ձեծուել են, նրանց ունեցած-չունեցածները խլուել է։

Առհասարակ էկզեկուցիայի ենթարկուած հայ գիւղացիների վիճակը բազմաթիւ է մինչև երկինքը։ Կազակներն և թուրք սարաժնիկները հայ գիւղերից տանում են քանի հարը, ալիւրը, գարին, դարմանը, խոտը, հաւը, հնդկահաւը, ամեն բան, մինչ որ այս կամ այն լանի համար պիտանի է, և գիւղացիները ծնօրհ են մերկ, սոված, չոր քարին նստած։ Եւ այս բոլորի հեղինակը գեն. Տակայշվիլու կոմից խառնաղասլո յանձնաժողովի անդամ նշանակուած Ագի-գեօզալ-բէկ Ագի-գեօզալովն է, որի տուած հրահանգերովն են գործում կազակներն ու թուրք սարաժնիկները։ Նիկոլայ-բէկ Փիլոսոմեան, Նիկոլայ-բէկ Աբելեան և Միքայել Դոլուխանեան գիւղացիների խնդրանօք գնացել են Թիֆլիս փոխարքայի առաջ պարզելու հայ գիւղերի այս անտանելի վիճակը և փրկութիւն հայցելու։

Չիանդիլի գաւառն են դարձել Բազուից հայ բանուորները, որոնք գժբաղդաբար մեծ-մեծ փափաքներ և երկարաճիտ կօշիկներ են կրում. նրանց հայդուկ համարելով բռնում բանտարկում են, ասելով թէ Համազասպի խմբից են։ Համազասպը մի փուշ է դարձել սահասարակ թուրքերի աչքում։ Դովշանլու գիւղի Տէր-Եսայի քահանային ձիու պոչից կապում են հինց նրա համար, որ նրա որդին իբր թէ Համազասպի խմբումն է։

—

ՇՈՒՇՈՒԻՑ մեզ գրում են.—Երեկ, հոկտ. 27-ին, թուրք ոստիկանութիւնը, զօրքով և կազակներով շրջապատելով բժիշկ Լևոն Աթաբէկեանի բնակարանը, խիստ խուզարկութիւն կատարեց։ Ի ցաւ այդ ոստիկանութեան, խուզարկութիւնը ոչ մի բան երևան չհանեց. սանը հզել է մի հրացան, որը կրելու համար Աթաբէկեանը պատշաճաւոր իշխանութիւնից վկայական ունէր. այնուամենայնիւ ոստիկանութիւնը ձերբակալեց Աթաբէկեանին բանտ ուղարկեց, որովհետև այդպէս էր կարգադրել հեռագրով գեներալ Տակայշվիլին։ Այդ ձերբակալումը մեծ վրդովմունք պատճառեց հայ հասարակութեանը։ Քաղաքագլուխը հեռագրով դիմել է Տակայշվիլուն, թէ ինչ հիման վրայ է ձերբակալել Աթաբէկեանին։ Հասարակութիւնը պատրաստւում է հեռագրով բողոքելու փոխարքային, Տակայշվիլու այդ անարդար և անհիմն կարգադրութեան դէմ։ Տակայշվիլին, ինչպես ամեն դէպքում, նոյնպես և այս դէպքում, առաջնորդուել է միայն և միայն թաթարական սուտ մատնութիւններով։

ԲԱԳՈՒԻ ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԻՑ

—

ԲԱԳՈՒ, 20 հոկտ.— Այս առաւօտ քաղաքում լուր տարածուեց, թէ խուլիգաններ թաթարների պատկերով ու զրօշակով պլսի թափոր կազմին քաղաքում և յարձակուեն անարի ու քաղաքացիների վրայ։ Ահ ու սարսափը սրերց։ Ցերեկուայ ժամը 12-ին մի քանի հազար հոգուց բաղկացած հսարակ դասակարգի առանձից անցան դէպի ռուսաց եկեղեցու հրապարակը։ Ամբոխի առաջից գնում էին 30—40 կազակներ, յետևից պիտուորներ, պիտուորական երաժշտական խումբը, տար 60—70 կազակներ ալ ու ձախ ցրուած։ Ամբոխի մէջից լսուեցին ձայներ «Կորչին հայերն ու հրէանները»։ Խանութների կողպուելին, հայերը փակուեցին, և թափորը կանգ առաւ եկեղեցու հրապարակի վրայ։

Ինչպես առանձին իրենք են ասում, իբր թէ ասոյ գան. Իսկոյն եկեղեցու մէջ մի տղու հետ խօսելով ասում է, որ հայերը առանձին կոտրում են, Ցարի կառավարութիւնը փչացրին և այլն, որից յետոյ «Կորչին հայերը» կրկնում են «ասա»-ներով։ Եկեղեցու բակից ամբոխը վրնում է դէպի թուրքաց մզկիթը (Տեսնում եք ինչ պիսկիկ գաս է տրուած...), ուր յայտնի Աշուրով թուրք հարուստը պնհատրում է և պատուիրում թուրքերին, որ հետևեն առանձինների ժամը 3-ին ռուս և թուրք ամբոխը «հզայացած» մտան Պարապիա հրապարակը, ուր մի օր առաջ թուրքերի ձեռքով հրապարակի կիզրոնում դրած կարմիր գրօշակը նոյն թուրքերի և ռուս մուժիկների ձեռքով պատառ-պատառ եղաւ։ Այրեցին այն բոլոր կրպակները, որոնց գըլխին մի օր առաջ կանդնած ռուս, հայ, թուրք, հրէայ, պիտուորական և այլք ճառեր էին խօսել Ցարդնցին և այլ հրապներ, տախտակէ շէնքեր։ Ռուս բանուորների մէջ աչքի էին ընկնում հազուստները փոխած շատ քաղաքապետ ոստիկաններ «գարաջաւոյ» որոնք բոլոր ու բացօթեայ քնող (բոսհակների) ռուսներին առաջնորդում էին։ Ժամը 4-ին ամբոխը գիմից դէպի հայոց թաղը, սա-

կայն մինչև Տարգովայա փողոց մբռնեները լուսեցին հրացանի բազմաթիւ պայթիւններ։ Ժողովուրդն սկսեց փախչել։ Լսւում էին հեռուեալ խօսքերը. «Հայերը կրակ բացեցին ռուսների և թուրքերի վրայ, կոտորեցին...» Հայերի սարսափը կատարեալ էր։ Մինչև թնդանօթների բերելը, թուրքերը, ոստիկանութիւնը և կազակները գնդակի տարափ թափեցին Սաղաթելեանի տան և Մելիքեանի լուսամուտներից հետատնոցի վրայ։ «Վերջինս Թադևի տանն է սպրում, և Մելիքեանն ինքը դեռ ամբոխոցից չէ վերադարձել»։ Թնդանօթից 4 ռումբ արձակեցին Սաղաթելեանի տան վրայ, իսկ Մելիքեանի բնակարանին ոչ, որովհետև շէնքը թանգիեին է, այլ բաւականացան լուսամուտի ապակիները փշրելով։

Եթէ փետրուարեան և օգոստոսեան արիւնոտ օրերից յետոյ, երբ այդ ոստիկանութիւնը խայտառակ կերպով սեացաւ բարձր իշխանութեան առաջ, հինովին փոփոխութեան ենթարկէին, ոչ Սաղաթելեանի տունը կը ռմբակոծուէր, ոչ էլ Թադևի լուսամուտները կարդ ու փշուր կըլինէին, դեռ չեմ խօսում մարդկային զոհերին, որոնց թիւն առայժմ անյայտ է). որովհետև, ինչպես ականատեսներն են պատմում (ռուսներ) թափորն այդ փողոցով անցնելիս, մի քաղաքապետ ոստիկան առջևանակից հինդ անգամ կրակ է բացում Սաղաթելեանի տան դարբասա կոչուած դրան մէջ։ Բացի այդ, Սաղաթելեանի տունը և Թադևի տունը (Մելիքեանի բնակարանը) գտնւում են Տարգովայա փողոցի վերին ծայրում, և այդ փողոցի անկիւնները փետրուարեան և օգոստոսեան կոտորածի օրերում հայ երիտասարդների համար ծառայում էին իբրև դիրք, որտեղով ոչ մի թուրք անցնել չէր կարողանում։ Հետաքրքիր չատ հասկանալի է, թէ ինչու են այդ տեղի վրայ աչք տնկել։ Իսկ թէ Սաղաթելեանի տունը և Մելիքեանի բնակարանը խուզարկուել են և զէնքերի ու փամփուշտների անապին պահեստ է բացուած (ոստիկանութիւնն այդպիսի լուր է տարածել) մենք դրան չենք հաւատում։ Մեր ոստիկանութեան այնքան զէնք կայ, որ կարելի է ամեն խուզարկութիւն մեղերում հրապարակ հանել... չէ որ էլի ոստիկանատուն են մտնելու այդ զէնքերը...

Այժմ գիշերուայ ժամը 7-ն է. փողոցներում բացի կազակներից, խուլիգան մուժիկներից և թուրք թափառաշրջիկ «հայկի չահիլներից» ոչ ոք չկայ։ Տեսնենք ինչպէս է լուսանալու. եթէ կենդանի մնամ, հետևանքի մասին կը գրեմ։

Ց. Գ. Առաջ եմ բերում երեկուայ սպանուածների ու վիրաւորուածների ցուցակը, որոնք ընկել են Շամախու ճանապարհ կոչուած թաղում, բանի առաջ։

Գրիգոր Սարգսեանց, Տիգրան Մարգարեանց, Դաւիթ Մանուկեանց, Աւետ Ամակեանց, Ռուբէն Տէր-Օհանեանց, Յակոբ Գէորգեանց, Նիկողայոս Յակոբեանց, Նիկողայոս Զաքարեանց, Ն. Մալխասեանց, Միքեոն Աբրահեանց և Ս. Զամամախեան։ Բացի դրանցից, որ հայեր են, կան վիրաւորուածներ ու սպանուածներ ռուսներից, հրէաներից և վրացիներից 10-ը հոգի, իսկ թուրքերից՝ 8 հոգի։

21 հոկտեմբերի. — Խռովութիւնը փակ են. ոչ մի հայ քաղաքում չի երևում. կարծելիք Սաղաթելեանի տան ամրակոծութեամբ ամեն ինչ վերջացաւ. սակայն, ինչպէս երևում է, չարքն անվերջ է... Ռուս խուլիգանները, թուրք խուլիգանների առաջնորդութեամբ, «կորչին հայերն ու հրէաները» գոռալով մտան Նիկոլայեւսկայա փողոցը և կանգ առան Ծխախոտի գործարանատէր Լիս. Մելիքեանցների սեպհական տան առաջ։ Մի ռուս բարձրանալով մարդկանց ուսերի վրայ ձառ խօսեց. թուրքերը փոփոսցին. լսուեց սարձակի ձայն, մարդիկ աջ ու ձախ ցրուեցին։ Թուրքերը ռուսերէն բղաւեցին. «Մելիքեանցները կրակ արեց, հայ է, կորչի»։ Այլ ևս թնդանօթի չսպասուեց. մի կողմից կազակներն սկսեցին գնդակի տարափ տեղալ տան վրայ, միւս կողմից թուրքերը նաւթ ածել գռների վրայ ու հրդեհել։

Մելիքեանի տանը ոչ մի հայ ապրող չկար. հայերի մի մասը փետրուարի, միւս մասն օգոստոսի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Հոկտ. 17-ի մարտիրոսական իրեղեն վախճանի առթիվ յուզիչ հիշողություններ ազգային ոգու մասին

Հոկտեմբերի 17-ին մարտիրոսացավ Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե. Կոստանդնուպոլսի հայ հոգևորականության ներկայացուցիչները, որոնք ներկա էին Կաթողիկոսի հոգեհանգստյան արարողությանը, վերադառնալով Կոստանդնուպոլիս, պատմեցին Կաթողիկոսի վերջին օրերի մասին։ Ահա այդ պատմությունը։

Հոկտեմբերի 24-ին երեկոյան ժամը 7-ին Կաթողիկոսը հրավիրեց իր մոտ Կոստանդնուպոլսի հայ հոգևորականության ներկայացուցիչներին և ասաց նրանց, որ ինքը ցանկանում է հրաժեշտ տալ նրանց։ Ներկայացուցիչները ներս մտնելով, տեսան, որ Կաթողիկոսը նստած է աթոռի վրա, ձեռքերը ծալած, աչքերը փակ։ Նրանք մոտեցան և համբուրեցին Կաթողիկոսի ձեռքը։ Կաթողիկոսը բացեց աչքերը և ասաց.

— Ես ուզում եմ ձեզ հրաժեշտ տալ, որովհետև ես ինձ զգում եմ մահամերձ։ Ես ուզում եմ ձեզ հանձնարարել, որ հայ ազգի հոգևոր և քաղաքական գործերը միշտ ուղղեք ազգի օգտի համար

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱՏԱՐԱԿՉՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Թիֆլիս, 20 նոյեմբերի — Նոյեմբ. 18-ին, ցերեկուայ մօտ 10-ին, ժա-
մանակ տաք դռնեկ դռնից դուրս էր գալիս, ինչպէս իւր տնից դուրս գալիս միշտ անում էր, ձիաւոր ոստիկան Ա. Ա. Ա.

անավ-անիով Պարսկաստան վտանգրուող առաջնապատակ թուրքերի իրերի մէջ յաճախ է տեսնւում պարսկի կամ թուրքի չպատկանող և նոյն իսկ հայկական նշաններ ունեցող իրեր, մինչև անգամ վրան հայկական տառեր, կարուած բարձի երես և այլ բաներ, որոնք մաքսատներից անուշադրութեամբ անցնում են և որոնք, եթէ պարսից մաքսատունն ուշադրութեամբ հետևելու լինի, դիւրութեամբ կարող է հասկանալ, թէ կովկասի կոտորող կողմը ինչ է և կոտորուողը՝ ինչ, և թէ Կովկասից Պարսկաստան հասատուղ որ վաճառականներն ումից թալանած ապրանքներով են զարդարում իրենց փառաւոր մագազինները, և կամ թէ ինչու համար է, որ մի շարք առաջ հպատակ թուրքեր Պարսկաստան անցնելով պարսկահպատակութեան են դիմ[illegible]

Կարճ՝ հէնց այս դասի անմեղ և հայերից հալածուած ու կողոպտուած համշարիների Պարսկաստան դաճալումն է, որ պարսկահայի վիճակն էլ գնալով վատթարանում և օրհասական է դառնում։ Ահա Ուրմիայի հայերը պաշարուած դրութեան մէջ են. և այդ քաղաքի հայերից մէկն օրը ցերեկով բազարի մէջ սպանուեց, և մի ուրիշը (պարսիկներից յարգուած մի հայ վիրաբոյժ) վտանգաւոր վէրք սատնալով դեռ տառապում է. իսկ յանցաւորները Շէյխ Սաֆալիներ (նախահայր և անուանի շահ-Իսմայիլի գերեզմանն է) ապաստանած առայժմ ազատ են մնում իշխանութեան որոշած պատժից։ Ահա Բենդերի-Գիկը, որի առաջ աւելի քան մի ամիս է, լինչ ռուսաց պատերազմական մի նաւ է կանգնել որ և է պատճառական չարժման առաջն առնելու։ Պահս զրկուած չեն և էնդելին ու Ռաշտը, ուր նոյնիսկ վաճառական համշարիների և բազուցի թուրքերի սարքած խանութներ առաջն առնելու համար տեղական իշխանութիւնը պարտաւորուեց քաղաքը վնասուրական հպողութեան տակ դնել։ Ի՞նչ վիճակումն է Մազանդարանը, ուր թէև մահմեդական տարրն ահագին խաղաղ, սակայն պարզ տեսնւում է նրա լարուած դրութիւնը դէպի հայերու։ Իսկ Աստրպատականը. այնտեղ հ9 թուրք դաղաճների բանն է, և յայտնի է, թէ ի՞նչ արամադրութիւն պիտի ցոյց տան իրենց շրջակայքով։ Թեհրանից հասած նամակները նկարագրում են միևնոյն լարուած դրութիւնը և վախը։ Մէկ խօսքով՝ պարսկահայն իր ամբողջութեամբ այսօր ճնշւում է մի լինչ-որ խեղդող և ծանր մթնոլորտից. նա բաց աչքով մօտալուտ վտանգի և արիւնալի մի ահեղ, մի վոխորկի դրանն սպասում է իր կովկասցի եղբօր բախտին արժանանալու, և այն էլ թերևս ոչ այնքան ուշ։

Ճիշտ է, որ հաւատացողները և չընհաւատացողներ կան մեր մէջ, թէ շահը, ինչպէս և իր կառավարութիւնը, համակրելով հայերին և նոյն իսկ իր երկրի շահերը չվտանգելու համար կարուկ պաշտպանութիւն պիտի ցոյց տայ մեզ պարսկահայերիս։ Ցռուեռս չլինելու համար, մենք էլ նոյն պարոնների հետ միացած խօստովանում ենք, որ պարսից վճռապիռը և իր իշխանութիւնը ոչինչ չեն կարող պաշտպանելու հայերին, սակայն երբ 30,000-ից աւելի համշարիների չարամիտ պրոպագանդայով ներշնչուած ազէտ ամբոխը զբաղուած ասքի կանգնելով վճռի ջարդել պարսկահայերին, այն ժամանակ ինչ կարող է անել շահի կառավարութիւնը և ինչով կարող է պաշտպանել իր հայ հպատակներին, զքանի որ ինքը կառավարութիւնը զօրկ է ռազմական և պետական կառավարել ուժից և այլ ազգ զործադրելու համար ֆինանսական միջոցներից, մանաւանդ որ ներկայումս պարսիկ ժողովուրդը լարուած է նոյն իսկ իր կառավարութեան դէմ և նրա դէմ քայլելու առթի է սպասում։

Ահա համշարիների Պարսկաստան գաղթելու հեռանքը հայերիս համար։ Հայերիս վիճակն օրհասական է, և պիտի պատրաստ լինենք։ Սակայն լաւ է, որ պարսիկ ժողովուրդը չէ մոռացել Թիւրքմէնչայի դաշնագրութիւնը և նկատի առնի նաև ռուս զէնքի ներկայ արամադրութիւնը։ Զգուշացնում ենք պարսիկներին և ամ-

Սաունց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիսի հայոց՝ բարեգործական ընկերութեան վարչութիւնը հնորհակալութեամբ առացաւ վերջին թրքական ազէտներից վնասուածների համար՝ Թիֆլ.-Ման-Շուբա քաղաքից պ. Տէր-Աբրահամեանց միջոցով հաւաքած 136 կոպ. հին շորեր, Ա. Ֆամէ թ կայարանից պ. Լևոն Սահինեանից 50 կոպ շոր և 1 զոյգ կօշիկ, Մայկոպ քաղաքի հայ հասարակութիւնից 600 կոպ., որ նուիրել են պ. պ. Բերբերեանցները 180 կոպ., Անդրէասեանց 83 կոպ., Շապազեան Մ. 40 կոպ., Գաբաչեան 43, Տամանցեան 40, Տէր-Օհանեան 37, Ռուցկան 26, Թորոսեանների 10, Խաչեան 13, Չիրիքեան 12, Յարութիւնեան 14, Թօլուբեկեան 12, Յ Շապսղաեան 28, Աւետեան 8, Մկրտչեան 15, Թէրզեան 5, Աւետեան, Զաքերեան և Վարդանեան 24, Թեղիեան 12։

Թիֆլիսի հայ հասարակութիւնից՝ եղբ. Եարգուբեանցներից առացուած է 3 հատ կանացից նոր վերարկուներ, 2 զոյգ կանացից կօշիկներ, 35 զոյգ նոր չուառներ գնացած մեծաքանակ, օր. Վ. Մելոսեանից 32 կոպ հին շորեր և նրա միջոցով զրկեալ 19 կոպ, տիկ. Շ. Շիպանեանց 19 կոպ., Նիկ. վառ. Թադէոսեանց 3 բազկովի Վերմակներ և 31 կոպ շոր, դերասան պ. Յով. Աբելեանից 13 կոպ., պ. Ա. Սերեբրյակովից 5 զոյգ հին երեխաների կօշիկներ, 1 զոյգ գալոշ, 21 կոպ շոր, Ջմբուխտ Շիրինեանից 24 կոպ շոր և 4 զոյգ կօշիկ, տիկ. Սաթինի Տէր-Սէրեբեանից 16 կոպ., Անոնա Միքայէլեանց 67 կոպ., մի անյայտից 2 բարձ խոտիլ, մի բարձ բմբուլից, 8 կոպ շոր, տիկ. Սոֆիա Ղազարեանից 25 կոպ., տիկ. Ս. Դանիելեանից 49 կոպ., պ. Ե. Յուքեանեանից 14 կոպ։

Փող առացուած է մի անյայտից պ. Ս. Յէլբրեանի միջոցով 107 րուբլի և մի անյայտից 1 րուբլի։

Բացի զրանցից, վաչութիւնը, նպաստամատոյց յանձնաժողովից առացել է 1300 րուբլի, որն արդէն բաժանուած է վերջին ազէտից վնասուածներին նրանց դրամիքնը քննելուց յետոյ։

Թիֆլիսի հայոց բարեգործական ընկ.
Վ. ԱԲՋՈՒԹԻՒՆ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳՐՆԵՐ

Պետերբուրգի Հեռ. Գործակալութիւնից

30 հոկտեմբերի

ՄԵԻԱՍՏՈՊՈԼ, 30 հոկտեմբերի.— Քաղաքը հանդիստ է։ Երեկ երեկոյեան ոստիկանապետի սրած ձերբակալութիւնների շնորհիւ, կալանաւորուեցին մեծ թուով խուլիգաններ, որոնցից 50 հոգու չափ քաղաքից բոլորովին արտաքսուած է։

ՌԻԳԱ.— Հակառակ երեկուանից լ վեր պատրաստուելիք անկարգութիւնների մասին տարածուած լուրերի, այսօր հանդիստ անցաւ։ Գոլոշի տեխնիկական ինստիտուտի դռների վրայ կպցուած են Վալդէն պրոֆեսորի ատրպգրութեամբ յայտարարութիւններ այն մասին, թէ, համաձայն ուսումնական կոմիտեի հոկտ. 29-ի կայացրած որոշման, ինստիտուտը փակւում է անորոշ ժամանակով։

ՊԱՐԻԶ.—«Journal»-ը մեծ ախալ է համարում ազատամիտ կուսակցութեան ունեցած այն ընթացքը, որով նա անտարբեր է գտնուել կառավարութեան օգնելու գործում կարգը վերականգնելու և ահեղութիւնն իրագործելու վերաբերմամբ։ Վիատէն ազատամիտներին տուել էր բաւական զօրեղ առնաւոտեայ, և զժուար է ընդունել, որ բոլոր տարաձայնութիւնները եղրափակուելիս լինէին ընդհանուր ձախասութեան հարցի մէջ, որովհետև ռուս ազատամիտները պէտք է համոզուած լինեն, որ այդ իրաւունքը (ընդհանուր ձախասութեան) զօրութիւն չունի Ռուսիայից քաղաքակրթօրէն առաւել բարձր երկրների մէջ իսկ, որպիսիք են Անգլիան, Պրուսիան, Աւստրիան, Զուիցերիան, Նորվեգիան, Ունգարիան։ Ազատամիտների ընթացքի բացատրութիւնը կայանում է նրանց՝ սոցիալիստների տարբերութեան մէջ։ Այդ ընթացքը վտանգաւոր է նոյն իսկ ազատամիտների կուսակցութեան տեսակէտից։

Միևնոյնների խոհրդում վճռուած է էմիէնին յանձնել պատերազմական գործերի միևնոյնութիւնը, Դիւբէօֆին—արտաքին գործերի միևնոյնութիւնը, Տրուլլէն—առևտրական գործերի միևնոյնութիւնը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Հոկտեմբերի 30-ի մանուանական հրամանագրով Դուբոնովն նշանակուած է Պուռական Մորդուի մնդախ, յանձնուելով նրան միաժամանակ և ներքին գործերի միևնոյնութեան կառավարչութիւնը։

ԿՐՈՆՇՏԱԴ.—Քաղաքը հանդիստ է. պահպանութեան նպատակով բերուած զօրքերը գտնւում են կրոնշտադում։

ՄՈՍԿՈՒԱ.—Ռուսական ընդհանուր երկաթուղային կեդրոնական բիւրոն ընդունում է հերթով յառաջիկայում տեղի ունենալիք ճանապարհնների զործադուլի մասին տարածուած լուրերը։ Մանկավարժական ընկերութիւնը, որն իշխանութեան կարգադրութեամբ ընդհատել էր իւր գործունէութիւնը, վերսկսել գործել հոկտ. 17-ի մանիֆեստի հիման վրայ։

ԲԵՐԼԻՆ.—«Նորդդեօյչէ»-ն նկատում է, որ նոր Ռուսիա ստեղծողների առաջ անլուծելի զժուարութիւններ կան կանգնած լինչպէս պետական-տնտեսական, նմանապէս և արամատականների ուտոպիաների պատճառով։ Հէնց այդ պատճառով ռուս-կառավարութեան կողմից մինչև այժմ կատարուած գործողութիւնները արժանի են համակրութեան, որովհետև անկեղծ ցանկութիւն է յայտնում անցեալի հետ ամէն կապ խզելու և ուսական նոր պետական կարգ ստեղծելու վերաբերմամբ։ Դժուարին հարցերի լուծումն այնքան արագ կըկատարուի, որքան Ռուսիան, երկիրը մոցնելով ժամանակակից սահմանադրական երկրների շարքը, անկեղծ ցանկութիւնով ներշնչուած խելացի շրջանների կողմից կըգտնի պէտք նաև շահերը Պարսկաստանում։ Մեծ Բրիտանիան ատանց երկիւղի չի կարող վերաբերել այն բանին, որ մի ուրիշ պետութիւն յինակէտ ձեռք բերէ Պարսից ծոցում։ Մեծ Բրիտանիան պիտի դրսևորէ մեծ հանդուրժողութիւն և ճշմարտասիրութիւն՝ առևտրական ուսուցչութիւնների ձեռքբերման համար։ Ընդհակառակն, Ռուսիան պիտի ջանայ ամրացնել իր դիրքը Պարսից ծոցում, որովհետև նրա համար կարևոր է ազատ ելք ունենալ դէպի Հնդկաստան։ Ռուսիան պիտի ջանայ ամրացնել իր դիրքը Պարսից ծոցում, որովհետև նրա համար կարևոր է ազատ ելք ունենալ դէպի Հնդկաստան։ Ռուսիան պիտի ջանայ ամրացնել իր դիրքը Պարսից ծոցում, որովհետև նրա համար կարևոր է ազատ ելք ունենալ դէպի Հնդկաստան։

31 հոկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — Արդարադատութեան մինիստրութեան մէջ փութով օրէնքներ են մշակւում անձի անձեռնմխելիութեան և միութիւնների ու ժողովների ազատութեան մասին։ Ամենամօտիկ ապագայում օրէնքների մշակումը կը վերջանայ։

ԼՈՆԴՈՆ.—«Daily Telegraph»-ն ասում է, որ Վիտէի արժանի է կատարել վատահութեան, նրա պատասխանատուները գործունեայ մարդիկ են, որոնք նոյնպէս պիտի գործելին ռուս հասարակութեան համաձայնութեամբ։ Յայտնի է, որ ռուս ազատամիտները ըրիատանական ատնամանազրութիւնն օրինակելի էին համարում, բայց եթէ լիակատար Ռուսիան ուզում է հասնել անգլիական սահմանազրական ազատութեան, ապա պէտք է իր բոլոր ոյժերը գնէ պետութեան արամադրութեան տակ։ Կառավարութիւնը չի կարող յանձն առնել ահագին կայսրութեան վերակազմութիւնը, եթէ ռուս լիակատիկնային վատահութիւն ցոյց չտայ նրան։ Նոր ուժիմը կը-քանդուի նոյնպէս, ինչպէս քանդուեց հինը։ Միւս կէտը գտնւում է պետական դիկտատուրայի մէջ բայց այս մասին մտածին անգամ անգիտութիւն է։ Մենք չենք դիմում ռուս ազատամիտներին նրանց վախեցնելու համար, այլապէս կասէինք, որ առաջին զոհերը նրանք կըլինեին։ Ցամին դէպս մենք կուշում են մնում նրանց հայրենասիրական զգացմանը։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Մի քանի միջնակարգ դպրոցներում վերսկսեցին պարապմունքները։

ԼՈՆԴՈՆ.—Քննելով Ռուսիայի դրութիւնը, «Standart»-ն ասում է, որ սահմանադրական ազատութիւն վայելող երկիրը չի կարող անտարբեր նայել, թէ ինչպէս ռուս հայրենասէրները կուռում են նոյնպիսի ազատութիւն ստանալու։ Մի բանում ռուսները կարող են վրդովուած լինել. այնամենը, ինչ որ ասում է այստեղ, այդ ամենը թէպէտև ճշմարիտ է անկեղծ բարեացակամութիւնից։ Ռուսիայի զժուարութիւնները կայանում են այն սահմանների որոշման մէջ, մինչև ուր պէտք է գնայ բուժարար պրոցեսը, այն ձևերի մէջ, որ պէտք է ստանայ այդ պրոցեսը։ Կոմս Վիտէն իրեն աշխատակցելու համար ժողովել է լուսամիտ ընկերներ։ Դիւբլեն է հանձնարար որ ռուս ազատամիտները ձգտում են ամէն բանի հասնել մի հարուածով, բայց մենք կարծում ենք, որ նոյն իսկ սահմանադրական ուիֆորմի համար շահաւէտ է, որ կայսրը զժուարութեամբ է համաձայնում խիստ ոտիւն զործելու։ Փորձութեան շրջանն օպտակար է, եթէ անհրաժեշտ չէ, ինչպէս կառավարողի, այնպէս և ժողովրդի համար։

ՏՈԿԻՕ.—Թէև քաղաքը հանդիստ է, բայց պատերազմական դրութիւնը դեռևս չի վերացուած։ Չերքակալուած է պատգամաւորների ժողովի նախկին նախագահ Գօնոն, որը վերջերս միտինգում խօսած հասի մէջ բողոքել էր հաշտութեան պայմանագրի դէմ։ Պարլամենտը գումարում է դեկտ. 12-ին։

ԼՈՄԺԱ.—Հոկտ. 17-ի մանիֆեստի առթիւ լինցնելուի բնակարանները զարդարուած են կանաչով և ազատութեան ազգային նշաններով։ Կառավարութեան համեմատ. մանուար ընդունելութիւն ամենայն օր, ժամը 9—10 առաւօտեան. վճարը 2 ր.։ Ծննդաբեր կանայք ընդունւում են միշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերու Զուտնորները ձբրի են։ Դիեզերոլոգիայի բաժանմունքը մանուարները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր.-ի օրագրչերուայ համար, ծննդաբերականի բաժանմունքը մանուարները 1—5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10—50 ր.։ Անդամահատութիւն—pus համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դէղեր և նիւթեր ստանում են ընդհանրութեան ժամանակ ձրի։ Զուտնորների համար 1 ական մահճակալ է պրուած լուրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորում են նրբանք տեսչի և սրա պ. պ. ընկերների տատոյքութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԹԱՏՐՈՆ
Հինգշաբթի, նոյեմբերի 3-ին 1905 թ.
Հայոց դրամատեքական ընկ.
խումբը
Մասնակցութեամբ տ. ՍԻՐԱՆՈՑԻ
կընկերկայացնէ
առաջին անգամ Իրանի
ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ՆԵՑՈՒԿՆԵՐ
պիես 4 գործ., թարգմ. Լ. Բաբաեանի։
Մասնակցում է ամբողջ խումբը։
Սկիզբն է ճիշտ ժամը 8 կր.
Հերթապահ անդամ վարչութեան՝
Հ. Առաքելեան
Ռեժիսիօր՝ Ս. Թափանեան
(39) 2—1

ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ

վերարացուած ՀԱՅՈՑ ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻ համար հարկաւոր են՝ մի առազ ուսուցչուհի բարձրագոյն կրթութեամբ եւ հնուս հոգեբանի մէջ, դիմադրաբար ուսուցչուհիներ և հմտարանաւարտ ուսուցիչներ։ Յանկարագրները թող իրենց պայմանները յայտնեն մեզ։

Նախագահ հոգաբարձութեան՝
Եղիշէ քահ. Թարխանեանց
(45) 3—2

Զաւիցերիայի դպրոցասարտ

մի ուսուցիչ

առանդած է Ժնեւեանի գտած մասնչելի պնով։ Պատասխ է և արշատն առանձնել Ժնեւաներին Թիֆլիսի՝ առևտրական դրամատներին բամասնելու և թարգմանել հայերէն։

Դիմել՝ Тифлисъ, Ванкскій пер., домъ № 10. Парунръ Масисянъ

10—7

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ ՀՄՈՒՏ

ԳՐԱՇԱՐՆԵՐ

Դիմել Բաթումեանցի տպարան, Բագրատ Աւագերդեանցին ժամը 10-ից 12-ը։

ՆՈՐ ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊԱՐԱՆ

Կրացուի առաջիկայ 1906 թուի յունուարից Թիֆլիսում, Պուլեվէսկայա փողոց № 7 տանը։ Տպագրութեան համար ընդունւում են տեսակ տեսակ պատուէրներ և ամեն տեսակ լրագրներով։

(44) Տպարանատէր՝ Օր. Նուարդ Աղանեանց 10—4

Լ Ո Ի Մ Ա Յ

ԱՄՍԱԳԻՐ

Գրական, պատմական և հանրային

ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄ Է ՀԵՏԵՒԵԱԼ ԱԻԵԼԻ ՔՈՒ ԾՐԱԳՐՈՎ

1. Ինքնուրոյն և ռուսերէնից ու օտար լեզուներից թարգմանուած վէպեր, պատմուածքներ և ստանուածներ, այլ և կենսագրութիւններ։
2. Կովկասագիտութեան վերաբերեալ ամեն տեսակ պատմական վերագրներ և յօդուածներ։
3. Ճանապարհորդութիւններ և ժողովրդի կենցաղի նկարագրներ։
4. Բարոյագիտական յօդուածներ։
5. Մատենախօսութիւն և կրիտիկա գրական երկերի։
6. Ներքին տեսութիւն։
7. Այլ և այլք. տեղեկութիւններ գիտութիւնից և արուեստից։
8. Մէրագրութեան պատասխանները։
9. Յայտարարութիւններ։

«ԼՈՒՄԱՅ»-ին կաշխատակցեն հետևեալ աշխատակիցները. Օր. Նուարդ Աղանեան, տ. տ. Զաքէլ Չիլինկարեան, Տիրուհի Կոստանեան, պ. պ. Ատրպետ, Արշակ Չիլինկարեան, Արշակ Զօրեանեան, Գաբր. Ենգիբարեան, Գրիգոր Վանցեան, Երուանդ Շահազիզ, Իսահակ Յարութիւնեան, Իւրիկ Վէսելովսկի, Կարապետ Կոստանեան, Մկրտիչ Բերբերեան, բժ. Մ. Արամեան, Միքայէլ Թամամշեան, Մկրտիչ Բարխուդարեան, Մկրտիչ Ղազարեան, Մուրատեան, Մուշէ վ., Mars, Մ. Շովրեան, Յովհաննէս Յովհաննիսեան, Ն. Յարոյ, Նիկ. Բարամեան, Շերվանդազէ, Պաարիկ, Պերճ Պուշեան, Սարգիս Մանուկեան, Ստեփան Գաբրիելեան, Վրթանէս Փափազեան, Տ. Վ. Քալէքեանի, Քննասէր և այլն և այլն։

Տարեկան բաժանորդագինն է Ռուսիայում 8 ր., Կէս տարուանը՝ 5 ր., իսկ արտասահմանում՝ 27 ֆ.։

Ովքեր արդէն բաժանորդ են դրուել վճարելով 6 ր., պէտք է լրացնեն ուղարկելով հետագրով 2 րուբլին։

Բաժանորդագրութիւն ընդունւում է Թիֆլիսում «Լումայ»-ի խմբագրատանը՝ Պուլեվէսկայա փ. 13, և կեդրոնական գրավաճառանոցում, իսկ գաւառներում մեր գործակալների մօտ։

Յայտարարութիւնների տոկոն արժէ 10 կ.։

Ապատիկ բաժանորդագրութիւն չի ընդունւում։

Խմբագրութեան հասցէն.—Тифлисъ, Редакція ежемѣсячнаго журнала «ЛУМА», арматаханманц՝ Tiflis, Rèdaction du journal armènien «LOUMA».

Խմբագիր-հրատարակիչ՝ Դիւտ. ա.-քահ. Ագանեանց.
(փ.) 5—5.

ՀԱՅ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

կանոնագրութիւն մշակող մասնաժողովը՝ համաձայն ուսուցչական ժողովի յանձնարարութեան յայտնում է պ. պ. հոգաբարձուներին, որ պատրաստ է առաջարկել ուսուցիչներ և ուսուցչուհիներ հայ եկեղ.-ծխական դպրոցների համար։ Դիմել՝ հայ ուսուցչական ընկերական միութեան ժամանակաւոր մասնաժողովին, կամ Тифлисъ, Временная Армянская учительская комиссія.
(33). Ограда Ванскаго Собора. 5—5.

Լոյս տեսաւ եւ վաճառւում է
Կարապետ Ափինեանի

„Շ Ի Ր Ա Կ"

Ծոցի եւ պատի 1906 թ.

Պատկերազարդ

ՕՐԱՑՈՑՑՆԵՐԸ

(Ութերորդ տարի)

Օրացոյցների արտաքինը խիստ գեղացրած է, յատկապատճները հարստացրած և ճոխացրած շատ և շատ օգտակար և հետաքրքրական տեղեկութիւններով։ Դիրքը, ծաւալը մեծացրած է։

Յանկացողները մանրամասն բովանդակութիւնը, առանձին թերթով ապագրուած, կարող են ստանալ ձրի։

Գները՝ Ծոցինը—20 կոպ., պատինը—50 կոպ.։ Գումարով պատուիրելին լինում է մեծ չափով զեղչ։

Դիմել՝ Александрополь, типографія „Ширакъ", Карапету Апинянъ, Արտասահմանից՝ Alexandropole, Karapet Apinian (Caucase)
(42) (չ. ո.) 12—1

2000—4000 ՐՈՒԲԼԻ *կողմնակի եկամուտ կարող է ունենալ ամեն ոք ով ձեռք կբերի վճարելով 300—600 ր. (թոյլ է արուում մաս մաս վճարում) մի մեքենայ հայկ, պատրաստելու համար անուշ համ ուտելեցող մի բերք, որ ամեն օր գործ է ածւում ամեն տեղ մեծ քանակութեամբ։ Այս գործը հաճելի է, թեթև, խիստ մատչելի և անապահով օգուտներ տուող։ Մանրամասնութիւնները ուղարկուում են պատասխին 7 կոպ. մարկով։ Դիմել՝ Фабрика машинъ Иппо и К°, Варшава, Грибная ул., собственный домъ № 15.* 25—12

Լոյս տեսաւ
Գ. Ա. ՐԵԳԻՆ ԼԵՒՈՆԵԱՆՑԻ
ԳԵՍԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԿԱՐԱԳՈՒԹԻՒՆ
տարրական դասընթացի
Առաջին մաս
Ստորին դասարանների համար։
Գինն է 20 կոպ։

Դիմել՝ Թիֆլիսի վրաւճառանոցները։ Պահեստը հեղինակի մօտ։
հասցէն՝ Эчміадзинъ, Гарегинъ Левонянцъ. Въ Академіи. 10—8

Տպարան Տ. Մ. Բոտինեանցի

Типографія Т. М. Ротиніанца Голов. пр., д. № 41.